



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

31.99

-17

1906p.



ՔՐՄԱԼԵԱՆՑ Ս.

ԳԱԼՕ ԱՓՕ

ԵՒ

ԻԱԶԱՆ

Մինչև մահ-գերեզման մարդ
պեճ է հրացան սիրի:

Բ. Տպագրութիւն



ԹԻՖԼԻՍ 1906

Տպարան „ԶԵՐՄԷՍ“ Մազաքեան փող. 15.

(139)



ԳԻՆԸ 12 ԿՈՊ.

891.99

4-17 7

82

ՀԵՄԵԼՆԵՆՑ Ս.

Գ Ա Լ Օ Ա Փ Օ

Ե Ի

ԽԱԶԱՆ

1001
4562

Մինչև մահ-գերեզման մարդ
պե՛տ է հրացան սիրի:

ԳԻՆԸ 12 409.

Բ. Տպագրութիւն



ԹԻՖԼԻՍ 1906

Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Մադարիան փող. 15.

(139)

29.08.2013

60302

-6 NOV 2011

Дозволено цензурою. Тифлисъ, 7 іюля 1906 г.

Ա

Ով որ սահմանազլխից մօտիկ է ծնուած կամ ապրած, նա լաւ կիմանայ, թէ ինչ են նշանակում «եկան, հա եկան» — «տարան հա տարան» խօսքերը: Անասելի արհաւիրք ու սրտողողութիւն են պատճառում այդ խօսքերը ամենին, մանաւանդ ընտանիքաւոր մարդկանց:

1853 թ. Բէհրուղոփի կռուի ժամանակն էր և ահ ու դողը ամենայն կողմ պատել էր:

Ախալքալակ քաղաքը, որ սահմանազլխից 20 — 22 վերստ էր հեռու, թափուրացել էր ժողովրդից: Փախչող փախչողի էր: Չարհուրած գիւղացիները կտրրկան եղած ոչխարների պէս ցրւում էին այս ու այն կողմը, որ գլուխներն ազատելու համար մի ճար ու հնար գտնեն:

Չորերն ու գետափերը ազամորդիներով դժվժում էին, մանաւանդ Բաբաթի, ին Ախալքալակի պատերի շուրջը: Աղքատ թէ հարուստ աուն, տեղ թողած, ամայի այր ու քարափ իրանց օթեան էին շինել և մէջը կուշուր արել սքլած հաւերի պէս:

Թուրքերը շարունակում էին այստեղ-այնտեղ վրայ տալը, յարձակումներ անելը, որովհետև սահմանագլխի մօտ ուստական ոչ մի հատ զինուոր չկար:

Հիմիկուայ Ախալքալակ քաղաքը այն ժամանակ երկու հարիւր տուն հազիւ ունէր. նրանցից քսան տուն վար ու ցանով էին պարապում: Բնակիչները ընդհանուր սարսափին չկարողանալով դէմ կենալ, ընտանիքներով անց էին կացել Փարվանայ գետը ու տեղաւորուելով սարսափեղէնում գտնուող գիւղերում, ինչպիսի են՝ Չանշուղաղ, Կորխ, Արագուայ և այլն:

Թուրքերի յարձակումը աշնան մօտերքին էր, ուստի գիւղացիներից շատերը իրանց խուրձը, հաշանը չէին կարողացել կրել ու կասել. այլ ամեն բան կիսատ թողած փախել էին ամուր տեղեր: Իսկ որոնք կասել՝ վերջացրել էին, ցորեն ու այլ հացահատիկներ շատապով հորերն էին ածել, նշաններ գրել, որ գտնելը հեշտ լինի, և իրանք հեռացել էին իրանց տուն ու տեղից:

Այդ սարսափին միւս գիւղերի թւում են թարկուել էր և Դադէշը, որ սահմանագլխից հինգ վերստ էր հեռու: Թուրքերը՝ այսինքն Օսմանցիք բարձրացել էին Գէոզ-ղաղի գլուխը:

Այդ լեռը ուսաց և թուրքաց տէրութեանց մէջ սահմանագիծ էր կազմում. նրա մէկ երեսը ուսաստանապատակ հայերն էին, միւսը թուրքերը:

Խիստ տաք աշուն էր. ոչ ցուրտ կար և ոչ

ձիւն: Ականատես ծերունիք վկայում են, որ այդ տարին՝ այսինքն 1853 թուին Յունվարից միայն սկսեց ձիւն գալ:

Բ

Պարսի կողմերից վաղուց եկել, Դադէշում բնակուում էր մի մարդ՝ Գալօ անունով: Սա քառասուն տարեկան էր դառել՝ միշտ ձիու վրայ ման գալիս. խոր ձորերը, բարձր սարերը նրա սիրած տեղերն էին. ազատակամ, անահ մարդկանց հետ շրջում էր գիշեր ցերեկ և կեանքը սրտի ուզածի պէս անցկացնում:

Աւագակութիւնն էր նրա սիրելի պարապմունքը, որով կարողացել էր գող թուրքերին զարգանդեցնել:

— Թուրքին պէտք է ծեծես, որ բարեկամանայ, ասում էր Գալօն:

Թուրքերը նրան Դալի Գեալստ այսինքն գիծ Գալուստ էին առում և նրա անունը արտասանելիս գողում: Ոչ ոք սիրտ չէր անում ծուռ մտքով նրա ապրանքին կամ տանը մօտենալ:

Յիսուն տարեկան ժամանակ միայն սար ու ձոր չափչփելուց ձեռ վերցրեց: Դրա պատճառն էր մի թեւու, սիրուն որբայրի հարս, որին վաղուց աչքադրել էր. սրակուեց հետը և տուն նստեց:

Այդ կնկանից ծնուեց մի հատիկ տղայ. մե-

ծանալով գուրս եկաւ բոլորովին հօր հակապատկերը, այսինքն մի թեթեւ ու թուովիկ որմին. այն ինչ Գալօն քչախօս մարդ էր, ինչպէս լինում են իգիթները, քաջերը:

Շատ անգամ բարկանալով յանդիմանում էր որդուն:

— Ախր, Արզուման, քեզ պէսը պէտք է լինի իմ որդիին: Լաւ պտուղ լինէիր, մի հատ չէիր ծնուիլ:

Որդու հետ կռուելով սիրտը չէր հովանում. նրան թողում, բռնում էր կնկայ ետից. «Մէջքդ կտարի, այ կնիկ, ինչո՞ւ անշնորհք տղայ ես լոյս աշխարհ բերել»: Խեղճ կինը չէր իմանում նրա բարկութիւնից ինչպէս ազատուի: Գալօն ծերացել էր արդէն, բայց արիասրտութիւնը ձեռից չէր թողում: Երբեմն-երբեմն զլուխը թափ տալով՝ ծերութիւնից գանգատողներին ասում էր.

— Միթէ հայ մարդը կը ծերանայ, կը թամբալանայ: — Չէ, պատասխանում էր ինքն իրան, ձին որ ձի է, եթէ ծեր այդրից, որձ ձիուց է ցնգնել, հօր ցեղը չի կորցնում. երկար ճամբայ է գնում, չի յոգնում. բա, մենք որ հազար հազար տարեկան ազգի որդի ենք, ամօթ չի, որ թամբալ լինենք:

Աչքով աչք չունէր վախճան տգերանց տեսներու: Միշտ պախարակում էր նրանց և ասում.

— Ախր աղքատը սրտոտ պէտք է լինի, որ սովամահ չըլլինի: Վախկոտ եղան, ունեցածը ձե-

ռից կըխլեն: Մինչև մահ-գերեզման մարդ պէտք է հրացան սիրի, քանի որ ապրում է գազաններից վառթար թշնամիների մէջ:

Գաղէշ զիւղում Գալօյին մեծ ու փոքր Ափօ էին կանչում:

Ափօն ամեն Աստու շաբաթ օր իւր գէնքերը կախած տեղից վէր էր բերում և մեծ սիրով սրբում, մանաւանդ հրացանը, որ ընտիր շէշխանա էր, փողի մէջը խաղկագուտ: Հէնց միայն եօթը թիզ երկէնք ունէր: Իրան պէս իւր հրացանն էլ գովական էր ամբողջ Ղարսի ու Ախալքալակի գաւառներում, երբէք նշանը չէր խլաթում:

Շատ մարդ էր սպանել Գալօն գաշտերում, ձորերում, շատերի գէմ կռիւս էր արել, որոնց մասին երբեմն-երբեմն սիրով պատմում էր, բայց զիւղամէջում արիւնհեղութիւն ամենակին չէր արել:

Նրա անունը լսող ու ճանաչող հասակաւոր թուրքերն աւելի էին պատուում, յարգում, քան թէ Գաղէշի երիտասարդները, որոնք քամի կուլ տուող և մեծախօս արարածներ էին: Նրանց չէր սիրում Ափօն:

— Վայը գայ, ասում էր, այն զիւղի ու ազգի գլխին, որ ձեզպէս պարտապ հացակեր տղէք ունի:

Երիտասարդներն էլ Ափօյի յանդիմանութիւններից նեղանալով, նրան ծուռ աչքով էին նայում և պարծենալով պատասխանում:

— Ի՞նչ ես ամեն օր խայտառակում մեզ՝ թէ գաշոյն կապեցէք, հրացան բանացնել սովորեցէք:

Երբ վտանգը կը գայ, քնած չենք մնալ. այն ժամանակ մենք գիտենք, թէ ի՞նչ շնորհք ու քաջասրտութիւն ցոյց կը տանք, հիմի ի՞նչ կայ որ...



1853 թուին վերջապէս վտանգն ու սարսափը եկել էր Դաղէշի մէջն էլ: Ափօն 79 տարեկան ծերունի նստած էր հանգիստ իւր օջախի ափին. ոչ ան էր քաշում, ոչ երկիւղ: Վստիկ Արզուման տղէն էր, որ շուտ-շուտ տուն պըծնելով՝ անդադար մօրն ստիպում էր, որ սարք ու սուրք անեն, ուրիշներէ թւում իրանք էլ փախչեն գիւղից, ձորերում, այրերում պահուեն:

Ծերունին ամեն անգամ գայրանում էր որդու վրայ և չիբուխը նոր ի նորոյ չաղացնում, ծխում հանգարտ թինկը տուած: Միայն երբեմն երբեմն աչքը ձգում էր պատից կախած հրացանին ու յետոյ լսիկ ու կամաց ձեռք տանում գէպի մէջքը գնդակների շարքերը, իւր շինած փամփուշաները շոշափում:

Դաղէշ գիւղը համարեա դատարկուել էր: Գործ, պարապմունք ամենը թողած գլխներն ազատելու հոգսունն էին: Լեղապատառ եղած կանանց ու աղջիկներին տղամարդիկ այս ու այն ապահով ծերպերն էին տարել և տներն անտէր, անտիրական թողել:

Թուրքերի «տար հա տարն» էր. ձանկներն

ընկածը փախցնում էին, կարծես այդ օրերին արևը դրանց համար էր ծագում, դրանց փառաւորութեան ու վայելչութեան համար մայր մտնում:

Գիտէին թէ իւղալի պատաները, այսինքն հարուստ մարդիկը սվքեր են գիւղում, մտնում էին նրանց տները և իրանց սրտի ուզած բաները, ուտելիքները շոկշոկում, շալախում, տանում: Առաջները կտրող, արգելող չկար:

Տեղ-տեղ տներում պառաւ կնանիքն էին տնապահ մնացել: Բացի Ափօյի անից, գիւղում մի ուրիշ տուն էլ կար, որ իրան տեղը անշարժ, հանգիստ կացել էր. տարածուած սարսափը նրա անդամների վրայ մազաչափ էլ չէր ազդել: Վարդեանանց տունն էր այդ: Քաջասիրտ Մ'սօն այդ տան փեսէն էր. իսկ աննման և սիրուն Շողերը նրա նշանածը:

Բայց ո՞վ էր Մ'սօն:

Մ'սօն միակ երիտասարդն էր Դաղէշում, որ իւր սրտատուփեամբ սիրելի էր Ափօյին, կարծես նրա աշակերտ: Մ'սօյին դիպչել՝ նշանակում էր կայծակի կտորի դիպչել. ամենն էլ դողում էին նրանից, գիտէին որ նա առանց շանթելու իրան դիպչողին բաց չի թողիլ:

Թուրքերը փախենալուց նրան քաղցը կերպով բարև էին տալիս, իսկ Դաղէշի պարծենկոտ, տանը հաւ սպանող տղէքը չէին կարողանում նրա փառքը տանել. աչքները ծակում էր: Պատուելու փոխարէն նախանձում էին և «Աստուանձ, Աստուանձ»

կանչում, որ փորձանքի հանդիպած տեսնեն նրան: Այդ լափ լիզող երիտասարդները թուրքերի հետ սէր կապելով՝ սկսում էին թուրքերին յորդորել, նրանց առաջնորդել գէպի Գաղէշ և յափշտակելու որսերի տեղը ցոյց տալ: Նրանց մէջն էր և Ափօյի աղէն, Արգումանը: Կողոպուտից մասն ունէին դրանք էլ: Թալանը թալան էր, խառնախաշ ժամանակ, ո՞վ կասկած կը տանէր թէ թուրքերի հետ հայեր էլ կան:

Գ

Մնօն իւր մօրը վերցրած անօր տունն էր քաշուել և հրացանը ձեռին դուրս ու ներս առնում: Թշնամի մարդիկ աշխատում էին մի կերպ նրան տանից հեռացնել, որ կարելի լինի նշանածին՝ Շողերին փախցնել:

Իրա համար Մնօյի անօր ապրանքը դաշտից քշել տուին, Այդ լուրն առնելուն պէս Մնօն տունը պահ տուեց իւր անօր աղերանց, ինքը ձիու քամակը թռաւ ու գնաց ապրանքի ետևից:

Հէնց այդ օրուայ իրիկնադէմին մի խումբ թուրք ձիաւորներ յարձակուեցին Մնօյի անօր տան վրայ: Հարևաններից, որոնք մնացել էին գիւղում, մի քանիսը դուրս եկան, նայեցին, տեսան, որ թուրքեր են, վախից իսկոյն փախան, տները մտան, ցեղերի տակ պահուեցին:

Թուրքերը տեսնելով որ ոչ մի կողմից ընդ-

դիմութեան նշան չկայ, վախակալած գիւղացիք բաւականանում են միայն հեռուից ծկրակելով, աւելի սիրտ առան ու մտան տան բակը: Մնօյի անօր աղէքը հէնց որ սկսեցին ընդդիմանալ, թուրքերը հրացանների կոթերով խփեցին նրանց գլխներին, շլքնքակոթներին:

Այս միջոցին էր, որ մի փայտ իրար ետևից մի քանի անգամ իջաւ թուրքերի գլխին: Յետ նայեցին թուրքերը, տեսան դրան շէմքում կանգնած մի աղջիկ, սիրուն, աննման. իրանց վրայ այնպէս է ծվում, այնպէս է ծղրտում՝ ինչպէս մի տղամարդ: Թուրքերի ջանին կասես կրակ մաղուեց: Դուռը կըրնկի վրայ բաց էր, թուրքերը նշմարեցին, որ ներսը մի քանի կնանիք էլ կան, պատի ու սիւների մօտ սարսափից կուշ եկած, կանգնած:

Թուրք գլխաւորը հայիլ ու մայիլ եղած՝ դարձաւ մարմարի պէս սփարթնած Շողերին և ասեց.

— Այ գէօգալ, մենք քեզ համար ենք եկել. մեր որսն ես դու այսօր և քո ոտով դուրս ես եկել տանից:

— Ա՛լի, դիմեց գլխաւորը թուրքերից մինին, փէտը աղջկայ ձեռից խլիր:

Եղբայրները քրօջ արիութիւնը տեսնելով իրանք էլ սրտապնդուեցին. ձեռով, թէ փայտով մտադրուեցին ընդդիմանալ, բայց թուրքերը, որ ոտքից գլուխ զինավառ էին, թոյլ չտուէն եղբայրներին փայտի հասնելու.

— Թուանքի բերան կրտանք, եթէ տեղնե-
րիցդ շարժուել էք: — Այ գէօզալ, դիմեցին աղջ-
կանը, որ կատաղած վագրի նման զնշուելով յար-
ձակուում էր իրան մօտեցող իւրաքանչիւր թուր-
քի վրայ, շատ մի փրփրտալ, քոխփելը մեզ հա-
մար վարդէ փշի պէս քաղցր է. խնդրում ենք,
լսիր, շատ դէս ու դէն մի ընկնիլ: Օրը մթնում
է, առանց ուշացնելու արի, բու կամքով մէկիս
գաւաքին նստիր, գնանք:

Այս ասելով երկու թուրք վրայ թռան բռ-
նելու Շողերին, որ մէջքը դրսի սնին դէմ էր
տուել և կանգնել, բայց նրա փայտի հարուածից
թուրքի մինը ճակատը բռնած յետ մղուեց և մէջ-
քի վրայ փռուեց, իսկ միւսը աղջկայ թեք ճան-
կելով առաջ քաշեց:

— Բաւական է, դանշղ, քան, մարդ չէս սպա-
նելու հօ: Դու հայի փանդ չես, արի գնանք քու
արժան մարդու մօտ:

Չէնց որ թուրքի ուժեղ կոները պատեցին
Շողերին, էլ չնայեց ոչ եղբայրներին և ոչ մօրն
ու հարսներին, որոնք լեղաճաք եղած տան ներսը
լալիս էին ու շորերը, երեսները ծուլատում: Աչ-
քը մի վայրկեան զցեց կտրերների, բաշերի վրայ
կանգնած երիտասարդներին, որոնք քարի նման
մնացել էին անշարժ: Միտ բերելով իւր նշանածը
սրտից խոր ան քաշեց.

— Մնօ ջան, սըր ես, Շողերիդ տարան. ան,
կոտորուեն մեր գիւղի վախկոտ ջահէխները:

ոյսս դու ես, անջիգեար, հասիր:

Այս աղէխարշ ձայնի վրայ պառաւ կնանիք-
իրարով անցան. ահ ու մահ մոռացած կտրէ կը-
տուր թռան.

— Ի՞նչ էք փայտի պէս կանգնել, տղամար-
դիկ չէք, ամօթ ձեր փափախներին, նախատե-
ցին թամաշաւոր մարդկերանց:

Այս կծու խօսքերից մի քանիսը կարմրելով
սիրտ արին, շարժուեցին տեղներից, մօտկացան
թուրքերին, լեզուակռիւ սնելով չը թողին, որ
աղջկանը տանեն:

Չէն ու ձուկը ամբողջ գիւղը բռնել էր:

Թուրքերից մինը հրացանը երեսը կալաւ և
հայերին վրապրծնելով գոռաց.

— Ով հակառակութիւն է անում, թող հրա-
ցանիս առաջը կանգնի:

Հրացանի բերանը որ տեսան ժողովուած
գիւղացիք՝ ահից հաւերի պէս քիշքիշ եղան:

Թուրքերից երկու հոգի Շողերին խտտեցին
և դրին մի ձիաւորի գաւաքի: Իսկ միւսները հա-
մարձակ ու անվախ գիւղի մէջտեղով գնացին:

Շողերն իրան տանողների հետ կուում, և
բարձր ձայնով ծվում էր, գլխին թաշկինակ չէր
մնացել. երկար ծամերը շաղ անցած ծածանում
էին ուժեղ ուսերի այս ու այն կողմը:

Անգութ թուրքերը առիւծասիրտ սիրուն
աղջկան ամուր սխմել և թոկով կապել էին ձիա-

ւորի քամակից, որ ձիու գաւաքից վէր չընկնի ու փախչի:

Ե

Այս հարայ-հրոցի ձայնը վաղուց հասել էր գիւղի ծայրը: Այդտեղ էր գտնուում Ափօյի տունը: Նա քանի ուզում էր գիւղամէջ դուրս գալ և իմանալ թէ ի՞նչ աղմուկ է, կինն ու տղէն խորհուրդ էին տալիս, որ տեղից չշարժուի:

Կինը պատճառ էր բերում. — այ մարդ, կըգնաս թուրքերի հետ կռիւ կըտաս. ծեր մարդ ես, կըխփեն, անպատիւ կանեն քեզ:

Իսկ տղէն չէր կամենում հօր դուրս գալը, որպէս զի Շողերի փախցնելը ոչ մի արգելքի չըհանդիպի: Նրա մէջ իւր մասն էլ խառն էր:

Մինչև վերջը Ափօն չը համբերեց, տեսաւ որ դարձուցը շարունակուում է, վեր թռաւ օջախի մօտից, չիբուխը գօտիկը խրեց, հրացանը շտապով պատից վէր բերեց, աղգօթին նորեց ու դուրս եկաւ առանց կնկան ու որդուն ու զարձնելու:

Տեսաւ անա մի քանի կանայք դէպ իրան են վազում: Սրանց մէջն էր Շողերի մայրը:

— Ափօ ջան, ալիքիդ դուրբան, լացախառն գոչեց կինը, Շողերիս տարան, Մ'նօն տանը չէ, յոյսս դու ես մնացել, օգնիր, ճար արա:

— Ո՞վքեր տարան, շփոթուելուց կակազելով հարցրեց ծերունին:

— Թ՛նւրքերը, թ՛նւրքերը, հեծկլտալով պատասխանեց Շողերի մայրը, հէնց հիմի տանում են: Հորէն-հորէն թուրքի գաւաքին կապած Շողերիս տանում են:

Ափօյի սիրտը յուզուեց. ան քաշելով շըրթունքները սեղմեց, նայեց աջ ու ձախ, տեսաւ բաւական հեռու մի քանի թուրքեր կանգնած: Կարծելով որ դրանք տանողների ընկերներն են, հրացանը երեսը կալաւ ու ճուռաց:

— Է՛ հէյ նամարդ շներ, այս օրին էիք ձամբայ պահում, որ ես ծերանամ, դուք գիւղից աղջիկ փախցնէք: Չէ, Ափօն դեռ այնքան չի մեռել, նրա արիւնը կունքուում դեռ ողջ է:

Մինչև հրացանի ոտը քաշելը՝ թուրքերն առաջից անյայտացան՝ որ Ափօյի զարհուրիչ ծղրտոցի հետ գնդակախորով չլինեն:

Ափօն ինքն իրան գառնալով գոչեց.

— Է՛հէյ ջահելութիւն, գութ ու ողորմ ունեցիր, շնորքներիս մի կտորը տուր ինձ այս միջոցին: Ե՛ն Տէր Աստուած, նամարդի սրտով չանես այս ծեր ժամանակ:

Այս ասեց ու կնանոնց հետ շտապ քայլերով մօտիկ թմբի գլուխը բարձրացաւ:

— Ո՞րն է ձիաւորը, աչքս լաւ չի կտրում:

— Հորէն, Ափօ ջան, երևում է, ասեց մի կնիկ լացակունած:

Շողերի մայրը ետևից վրայ բերեց.

— Ա՛խ, ո՛ւր էր թէ այս բոպէիս Աստուած

ինձ կուրացնէր, աչքիս լոյսը քեզ տար, Ափօ ջան, որ իմ Շողերի տանողին տեսնէիր ու ջիզարը խորովէիր:

— Քիչ սիրտդ հանգիստ պահիր և ինձ ահանջ կալ, խօսեց Ափօն: Մի ձիաւոր եմ տեսնում, որ ծանր գնում է և քամակից մի բան օդում փռուփռում է, նա է:

— Հէնց նա է, Ափօ ջան. ձիաւորն անիրաւ թուրքն է, փոփոռոն էլ Շողերի ծամերն ու մազերն են: Լացի ձէնը դեռ լսում է, ջան, բարա ջան, կրկնեց խեղճ մայրը և կողքի վրայ ընկաւ:

— Տեսայ, հասկացայ: Դէ, դուք միամիտ կացէք, սիրտ տուեց Ափօն, միայն ձեզանից մինը թող շուտով հասնի, մէկի բերանով իմաց տայ, որ Շողերը թուրքի քամակից թեքուի, թուրքի թիկունքն երևայ:

Առանց վարկեան կորցնելու մի պառաւ միւսին ասեց, նա էլ մէկէլին, երբորդին, չորրորդն էլ իւր կտրի ծայրից ձուաց.

— Ձան Շողեր, հէյ, Ափօն ձիաւորին նշնում է, աջ կշտի վրայ կնց, արևիդ դուրբան, աջ կշտի...

Մինչև այդ ժամանակ Շողերն այնքան ձրգձգել էր, որ կապած թուրքը թուլացել էր: Թուրքըն ուշադրութիւն չէր դարձնում, յուսալով որ ընկերները ետնից գալիս են. եթէ ընկնի էլ, նրանք կը բռնեն աղջկան:

Շողերը խուլ հեկեկաց ու գէպի աջ թեքուելով կախ ընկած մնաց: Թուրքը կարծեց, որ

աղջիկը սրանեղութիւնից նուազել է. ձին ոտն ահեց, որ ընկերները գան, հասնեն:

Այդ միջոցին Ափօյի հրացանը տրաքեց: Հրացանի տրաքելն ու թուրքի արձան գոռալը մէկեղաւ: Թէ թուրքը և թէ Շողերը իրար հետ ձիուց ընկան: Պառաւները կարծեցին թէ ձերուսու գնդակը սխալմամբ Շողերին է գիպել, սարսափած գոչեցին.

— Ափօ, վայ Ափօ, Շողերին սպանեցիր թուրքի ակորը, մուրագաչոր եղաւ խեղճ աղջիկը: Նաչար Մնօ, խաւարեց նրա աստղը: Վաճ-վաճ Շողեր, ախ ու վախ Մնօ...

— Թէ նշանն իմն է, պատասխանեց Ափօն ստաներես, Շողերը կենդան է, դուր մի լաք, փորձուած ձեռը նշան չի խլաթիլ: Մազ լինի, կը ջոկի, ինչ թէ թուրքի թիկունքը: Վազէք, գնանք:

Իսկոյն կիսանիզը մի մի փայտ առած Ափօյի հետ շտապեցին Շողերի ընկած տեղը: Դպէշի տներում ու կարրներին ինչ շունչ որ կար, սիրտ առած խուռն կերպով վազեցին: Ամենից բարձր լսում էր Ափօյի ծղրբաօցը և հրամանը:

— Տուէք այդ շներին, քարերով, քարերով: Ախ ջահէլներ, ձեր տղամարդութիւնը նգոված, նախատում էր ձերը հետզհետէ երկցող տղերանց, ձեր անունը հայ պէտ է լինի: Դուք պէտք է գիւղ պահէք. պառաւների չափ կտրիչ չունէք, գոնէ նրանցից ամաչեցէք, որ մի մի ձողի են վերկալել: Ինչո՞ւ ձեռներիդ հրացան չունէք: Ի՞նչ

1001
4569



էք ձեռներդ ծոցներումդ դրել: Խելքը գլխին մարդը առանց փայտի շների մէջ ման կը գայ: Դեռ ծերունուս վրայ ծիծաղում էիք, թէ ինչո՞ւ եմ հրացանս սրբում կամ թամբաքուր հետ խառը գրպանուսս գնդակ պահում:

Ափօյի այս խօսքերից աղէքը սրտովացած յարձակուեցին թուրքերի վրայ, որին ձիաթափ արին, որին ծեծեցին, որի գէնք-մէնքը խլեցին: Մինչև ուրիշների օգնութիւն հասնելը Շողերը ինքն էր իրան թուրքի դաւաքից ազատել ձիուց ընկնելուց ետը: Տեսնելով, որ գնդակը դիպել է, բայց թուրքը գեռ շունչ է քաշում, խկոյն նրա դաշոյնը հանել էր ու պնչին խփելով սասկացրել: Ափօն երբ հասաւ ու Շողերի ձեռին դաշոյնը արիւնթաթախ տեսաւ.

— Ա՛յրես, Շողեր ջան, ասեց ու մօտ քաշելով ճերմակ ճակատից համբուրեց: Երանի կը լինէր ինձ, որ իմ աղջիկը լինէիր: Ա՛յրի քեզ բերող արգանդը, թող քեզանից գոնէ քաջութիւն սովորեն մեր վախկոտ երիտասարդները: Այրես Մնօյի համար, նա է միայն քեզ արժան: Այնքան չմեռնեմ, ձեր պսակն էլ տեսնեմ:

Թ

Սրանից ետը երեք չորս ամիս միայն քաշեց Շողովրդի ցաք ու ցրիւ մնալը:

1854 թ. Յունվարին ոռուսաց զօրքերը հա-

սան սահմանադրուիւր: Ամեն մարդ իւր տունը դարձաւ, բայց թողած ապրանքներից շատ քչին տիրացաւ: Պահուստներից՝ որը տարել էին, որի էլ նշանը ոտնատակելի, կորցրել խառնակ ժամանակ: Շատ բաներ մնացին գետնի տակ թաղուած «վնյ տէր» կանչելիս:

Ոչ մինը տարածի, փախցրածի հոգսումը չէր, ոչ ով էլ չէր մտածում իւր ապրանքի ետևից գնալ. բայց Մնօն ինչ կը թողէր իրանից մի մազ կորչի. գնաց քշած տաւարը թուրքերի ճանկից խլեց, վերադարձրեց:

Դեռ Դագէշ չմտած Մնօն Շողերի գլխին եկած գէպքը լսեց մի բարեկամ մարդուց. իմացաւ թէ ո՞վ է ազատել Շողերին: Գիւղ հասնելուն պէս վազեց Ափօյի գիրկն ընկաւ, տասն անգամից աւելի այն ձեռները համբուրեց, որ իւր նշանածին ազատող հրացանը բռնել էին:

— Մնօ ջան, խօսեց Ափօն, մեծունանց խօսք է, թէ սոխի գէմ սխտոր պէտք է ծեծել: Այս օրից հաւաքուեցէք երիտասարդներդ միատեղ և վրայ տուէք թուրք օբաներին: Իմ խորհուրդն այս է, թուրքերի աչքը պէտք է ծեծով, թակով վախեցնել:

— Աչքիս վրայ, Ափօ ջան, խօսք տուեց Մնօն ու կազմեց դագէշցիներից մի լաւ խումբ: Այդ խումբը այս ու այն թուրք օբաների վրայ յարձակումներ անելով՝ մեծ ծառայութիւններ արեց ուսս զօրքին:

«Բեհբուդովի կոիւ» կոչուած պատերազմը թուրքերի դէմ վերջացաւ 1856 թուին. քաջ Մնօն այդ ժամանակ ամուսնացած էր: Շուտ պատկուելու առիթը այնքան Շողերի փախցնելու ահը չէր, որքան Ափօյին ուրախութիւն պատճառելը:—Ափօ ջան, ասել էր Մնօն երկու տարուց առաջ, ես պատրաստ եմ քու ասած խումբը հաւաքել, թուրքերի վրայ յարձակումներ գործել, մէկի տեղ քսանը սպանել, միայն թէ դու էլ իմ խնդիրը պէտք է լսես:

—Ի՞նչ է խնդիրդ, սրբի Մնօ, հարցրել էր ծերունին:

—Իմ խնդիրն այն է, Ափօ, որ դու ծեր տեղովդ իմ խաչեղբայրը դառնաս: Գիտես որ այն գլխից ես հայր չեմ ունեցել, հօր տեղ քեզ եմ սիրել ու պաշտել:

—Ափօյի աջ աչքի վրայ քո խնդիրը, Մնօ ջան, պատասխանել էր ծերունին ու սիրով կատարել նրա առաջարկը: 80 տարեկան Գալօ-ափօն ձերմակ ալիքներով զարդարուած եղել էր Մնօյի ու Շողերի խաչեղբայրը:

Թէպէտ դադէշցի Տէր Մարտիրոսի սրտովը չէր ժամում հին աւագակին խաչեղբայր տեսնելը, բայց արգելք դնելու պատճառ չունէր: Այն գլխից Ափօն Տէր Մարտիրոսին ատում էր, գիւղի տղերանց վախկոտութիւնը վերադրելով նրա սլընդի խրատներին:

Տէրատէրի օրհնանքից ետը ժամումը ինչ որ

բարեկամներ կային, բարեմաղթութիւններ էին արել: Ափօն ամենից վերջը նորապսակներին մօտեցել էր և ասել.

—Ձահէլ նորապսակներ, այդ է հօ դուք ձեր փափագներին հասնում էք. խնդրում եմ մեղաւոր բերանովս Ասածուց, որ ձեր լոյսը մեր գիւղի վրայ կաթի, ձեզանից ծնած որդիները՝ աղջիկ թէ տղայ՝ ձեզ պէս սրտոտ, ձեզ պէս քաջ լինեն:

—Մէկ էլ քեզ պէս, Դալի Գալօ, քեզ պէս, վրայ էր բերել Տէր Մարտիրոսը արհամարհանքով:

—Հն, տէրատէր, ինձպէս և ոչ թէ քեզ պէս ու իմ անշնորհք որդու պէս, պատասխանել էր ծերունին ծաղրական ձևով:

Ներկայ եղողները այս պատասխանի վրայ կուշա քմծիծաղ էին տուել: Տէր Մարտիրոսին շատ տեղ էր եկել այս ծաղրը. կատաղի բարկութիւն էր փայլել նրա դէմքի վրայ, կարծես նոյնը մխացել էր և սրտի ներսը:

—Ի՞նչպէս է համարձակուում հին աւագակն անպատուել ինձ ժողովրդի առաջ, ես նրան ցոյց կըրտամ, մտամոացել էր նա ատեն դառնալիս և այդ ոխը սրտում անմոռ պահել:

է

Պատերազմի սարսափն անցել էր և ամեն կողմ խաղաղուել: Դադէշ գիւղի միւս ծերերի կարգում Ափօն էլ գնում էր ժամ, ճաշակուելու

համար իւր մեղքերը ապաշխարում: Տէրտէրը ամենին խոստովանում էր, ամենի մեղքերը ներում ու հաղորդում, իսկ Ափօյին դառնալով ասում.

—Մեղքդ շատ է, քեզ դեռ հաղորդ չի հասնիլ:

—Մեղքս ի՞նչ է, որ շատ է, հարցնում էր Գալօ ափօն:

—Մարդիկ շատ են սպանել:

—Ա՛յ երէց, սպանածս մարդիկը անօրէններ էին, հօ հայ ու քրիստոնեայ չէին, ինչի՞ պէտք է մեղք լինի:

—Չէ, չի կարելի, նրանք էլ Աստծու ստեղծած են:

—Ախր, տէր հայր, ես որ նրանց չսպանելի, նրանք ինձ կըսպանէին. բա՛ ես Աստծու ստեղծած չէմ:

—Դու աւագակ ես եղել, աւագակին սպանելը մեղք չի:

—Նրանք որ աւագակ չէին, բա Աստծու գառներ էի՞ն. արի, մի անիլ, տէրտէր, ինձ մի չարչարիլ, մեղք արի ծեր հասակիս: Տեսնում ես, որ արածներս զղջալով աշխարհի առաջ մէկ մէկ խոստովանում եմ, մի՞ զրկիլ ինձ հաղորդից՝ այն Քրիստոսի արիւն ու մարմինն ընդունելուց, որ ինձանից վատթար աւագակին իւր սուրբ բերանով ներեց ու արքայութեան լաւ տեղը նրան նշանակեց: Ես անարժան հոգի եմ, արքայութիւն գնալու յոյս չունեմ, թող ճաշակուեմ, այդ միւլի-

թարութիւնն էլ է ունենամ մեռնելու ժամանակ: Մահը մերն է, մենք մահինն ենք, ու թսուռն տարին անց կացած մարդ եմ, արի, հասակիս խղճս, դու իբրև միջնորդ հաղորդող՝ տուր, երկնային դատաւորը գիտէ, ինչպէս որ վատթար մեղաւորիս կըգատի:

—Չէ, չի լինիլ, կտրական կերպով մերժում էր Տէր-Մարտիրոսը, քեզ պէս մարդասպանին հաղորդ չի հասնիլ, պէտք է շատ ապաշխարես:

Ը

Ամենայն տարի մի պատճառ բերելով Տէր Մարտիրոսը Ափօյին բանադրում էր իբրև մարդասպանի և հաղորդից զրկում: Խեղճ ծերունին անձայն համբերում էր: Տասը տարի անցաւ և հաղորդի կարօտ Գալօ-ափօյին տէրտէրը սրբութիւն չառւեց:

Քանի որ Ափօյի հասակը կտարւում էր, այնքան նրա սարսափը շատանում էր. ծերունին վախենում էր անհաղորդ մեռնելուց: Չէր իմանում, ի՞նչ անի: Լսել էր, որ Ախալքալակում մի տէրտէր կայ՝ սրտոտ ու լաւ հրացան գցող: Մի օր մարդամիջով իմաց տուեց նրան—այ երէց, ինչ կըլինի Դագէշ գաս: Այդ քահանան էլ, որ կտրուկ ձի հասող մարդ էր, լսած էր որ լաւ հրացան բռնող մի ծեր կայ Դագէշում, որին ողջ գիւղովի Ափօ են ասում:

Շնորհքով մարդիկ աշխարհի ծայրերից իրար տես են գնում, ուր մնաց Ախալքալակն ու Դագեշը, որ իրարից 16 վերստ են հեռու: Երիտասարդ Տէր Ստեփանը մի պատճառ էր փնտռում, որ Դագեշ գնաց Ափոյին տեսնելու: Պատճառն ինքն իրան լոյս ընկաւ, երբ Դալի-Գալօն մարդամիջով նրան հրաւիրեց:

1866 թ. աշունն էր, Տէր Ստեփանը վերկացաւ, գնաց Դագեշ, տեսաւ ծերունուն: «Ողջոյն» ասեց, ծերն էլ «Օրհնեա տէր» ասելով վրայ ընկաւ պարթևահասակ աէր Ս-ի ձեռը համբուրեց:

Ծերունի ու տէրտէր նստեցին, քաղցր խօսակցութիւն կցեցին: Ափօն զրոյցներ արեց անցած, գնացած բաների մասին: Տէր Ստեփանը լսածներին քիչ էր մնում, թէ չհաւատայ. պատմողը մի կծղած, զառամեալ ծերունի էր. առաջը նստած չիբուխը փստացնում էր և «փո՛ւ» անելով գուշիկ բերանից ծուխը քուլա-քուլա բաց թողնում:

— Ափօ, ափսոս, որ քու երիտասարդ ժամանակ ծնուած չեմ եղել, կուզէի այդ քու պատմածներից մինն ու մինը աչքով տեսնել: Քու մասին հայրս էլ է պատմել, ուրիշներից էլ եմ լսել, բայց քաջութիւններիցդ շատերն ինձ անհաւատարի են թւում:

— Տէրտէր ջան, աշխարհիս վրայ Աստուծո հետ հօ եղբայրանալու չենք. ի հարկէ ծնունդը

կըծերանայ և ամեն շնորհք կըկորցնի էլ: Քաջագործութիւնները հէքիաթի պէս բաներ կըթուան նորահասաներին: Ի՞նչ անենք, աշխարհ իրար գըլխով տուող մարդկանցից ո՞վ է մնացել հողի վրայ, որ մենք մնանք:

— Ափօ, քու մասին լսել եմ, որ երևելի ձի նստող ես եղել, զարմանալի հերոսութիւններ ես արել: Իրանք անցկացած բաներ են, բայց հաւատում եմ, որովհետեւ շատ ծերերից եմ լսել. միայն հրացան գցելդ, նշանի տալդ կուզէի հիմի աչքովս տեսնել: Ըղճրդ են ասում, որ նշանի լաւ ես խփում:

— Այ տէրտէր, այդ խօսքովդ սրտիս լաւ տեղերն ես յեռ բերում, ափսոս որ ուշ ես վրայ հասել: Ի՞նչ անեմ հիմի, որ խօսքդ տափը չընկնի, իմ սրտի սիրած տէրտէրն ես ու հազարից մի անգամ մի բան ես խնդրում: Երանի թէ Աստուած երիտասարդութեանս թուած օրերից մինը ես տար: Լսել եմ, որ դու էլ՝ հակառակմեր տէրտէրի՝ լաւ ձի նստող ու հրացան բռնող ես: Ես ու դու իրար հետ հրապարակ դուրս կը գայինք, ձի կը խաղացնէինք, հրացան կը գցէինք: Ասած է.—մէկ ջահելութեան ժամանակ, մէկ էլ ծերութեան. այս փուշ աշխարհից ի՞նչ ենք տանելու: Շիտակը որ ասեմ, սրտի կողմից էլի այն վաղի երիտասարդն եմ, բայց այս անտէր մէջքս ծերութիւնից փետացել է:

— 2է, Ափօ, թախանձեց Տէր Ստեփանը, Ա-

խաղբալակից ես այն մտքով եմ եկել, որ քո շնորհքներից մինը տեսնեմ: Արած գրոյցներդ ինձ վառել են, մի բան արա, մի շնորհք ցոյց տուր:

Ափօն ձայն չհանեց, խորշոմներով զարգարուած ճակատը շփեց, տեղից վեր կացաւ, գնաց տան պատից կախած հրացանը դուրս բերեց: Վրայի դեղին կապերը հրհրատում՝ պլպլում էին:

— Իմ հաւանած տէրտէրն ես, խօսքդ չեմ կոտրիլ, խօսեց ծերը: Դեռ Տիրոջ մօտ յոյս ունեմ, որ քեզ պէս կարգաւորի կշտին ամօթով չլթողնի:

Այս ասելով իսկոյն աղօթօթին նորեց և հրացանը թափահարելով խօսեց.

— Տեսնում ես, Տէր Ստեփան, այն բարակ ոստի վրայ կանգնող ծիարը. մտիկ, թէ ի՞նչպէս պէտք է ճիար թռցնեմ: Հօ տեսնում ես, ի՞նչքան հեռու է, եթէ ծառի գլուխը պոկուէց, իմացիր որ Գալօ-ափօյի տարածն է: Այն ժամանակ ես էլ մի խնդիր ունեմ, դու էլ իմ խօսքը չպէտք է կոտրես:

Ասեց ու հրացանը կուռը կալաւ 92 տարեկան հայը:

— Յօժար եմ կատարելու, ինչ խնդիր էլ ունենաս, եթէ խօսքդ զըրստուի, Ափօ:

Մինչև Տէր Ստեփանը բերանի խօսքը կ'աւարտէր, հրացանը զըրմփաց և ծիտն անգլուխ կնդրուկի տալով ընկաւ ոստի վրայից: Տէր Ստեփանը երեխայի պէս ցնծալով վազեց, ծիար վերց-

րեց ու կարմրած երեսով դարձաւ ծերունու մօտ.

— Ես, ճշմարիտ է, տէրտէր եմ, բայց համբուրելու արժանը քո ձեռն է, Ափօ, աջդ ինձ տուր, պէտք է համբուրեմ:

— Չէ, ինչպէս կարելի է, որ տէրտէրը աշխարհականի ձեռը համբուրի:

Բայց որքան էլ Ափօն ձեռը դէս ու դէն փախցրեց, Տէր Ստեփանը բռնեց, մի քանի անգամ պաշպչեց ու զգացուած սրտով խօսեց.

— Ափօ, խնդրի փոխարէն հրաման էլ տաս կատարելու պատրաստ եմ. քեզ պէս աննման քաջին գլուխս մատաղ է: Համարձակ ասն, մի քաշուիլ, ի՞նչ է ուզածդ:

— Տէրտէր ջան, ես հրամանի ոչինչ չունեմ, խնդիր է, բայց դժուար խնդիր:

— Ի՞նչ խնդիր է, որ այդքան դժուար ես համարում:

— Դժուարացնողը մեր տէրտէրն է, ես չեմ:

— Ի՞նչ բան է, ասա տեսնեմ:

— Ես տաս տարի է, անհաղորդ եմ, եթէ կարելի է, տէրտէր ջան, ինձ սրբութիւն տուր:

— Ի՞նչ դժուար բան է սրբութիւն առնելը, որ այդքան ժամանակ թողել ես:

— Ես չեմ թողել, տէրհայր, ինձ անարժան համարելով սրբութիւն չեմ տուել:

Եւ սկսեց ծերունին Տէր Մարտիրոսի արարմունքը մանրամաս պատմել և հետը հեկեկալ:

Տէր Ստեփանը նայելով նրա աչքերից թա-

փուռոյ արտասուքներին, ընկաւ զիրկը և ասեց.

— Ափօ ջան, ես գրքերի խորը չեմ կարդացած, որ մեկնութիւններով քո արդարութիւնը վկայեմ, բայց ճշմարիտ խոստովանուամ եմ, որ դու քո անկեղծ զղջման արտասուքներով աւելի արդարացած ես Փրկչի դատաստանի առաջ, քան թէ ես ու Տէր Մարտիրոսը:

Տէր Ստեփանի Գաղէշ գնացած օրը շաբաթ էր. գիշերը հիւր մնաց Գալօ ափօյի տանը. սաղմոս քարեց ու Ափօյի սիրու համար էգար փառաւոր պատարագ արեց, ճաշակեց Ափօյին: Ափօն այդ օրը հացկերոյթ ունէր, գիւղի առաջաւոր մարդկանց հրաւիրել էր: Ներկայ էր այդտեղ և Տէր Մարտիրոսը:

Չգիտեմ ի՞նչ կը լինէր նրա սրտի վիճակը:

Հետեւեալ տարին՝ այսինքն 1867 թ. մեռաւ պատուական Գալօ ափօն: Մեռած ժամանակ լողացնողները շորահան անելիս նկատել էին հագուստի վրայ կոշտ բաներ. կարծել էին թէ արծաթ փողեր են արխալուղի մէջից կարած: Դրա համար արխալուղը ծածուկ փախցրել էին: Բայց շորի կարերը բանդելով արծաթ փողի տեղ գտել էին հրացանի լցրած փամփուշտներ, որ Ափօն պահում էր անակնկալ վտանգների ժամանակ գործ ածելու համար:

93 տարեկան մեռաւ Գալօ ափօն:

ՆԻՇԵՑԻ ԽԱՉԱՆ

1880—83 թուերին Ղարալա գաւառը, որ ընկնում է Նուխու և Շամախու մէջտեղը, կատարեալ ալան-քալանի հրապարակ էր. ոչ կեանքի ապահովութիւն կար, ոչ ապրանքի. շուն ու գայլ խոռոնուած մէկմէկու ուտում, իրար բուրդ էին գզում: Եթէ Շախի ու Շիրվանի գաւառներում մի մի խումբ դաշաղներ էին երևում ու թաքնուում, Ղարալա գաւառամասում, ուր ուտիական ազգի մնացորդն է ապրում, թուրք աւագակները մի քանի խմբերով էին վխտում և Այլիգան ու Թաւրգեան գետերի աջ ու ձախ փոռուած շէների արիւնն ու քրտինքը ծծում: Խմբերի մէջ ամենանշանաւորը և ահարկուն Սէիդ աւագակապետինն էր. էլ գաւառապետ ու ոստիկանութիւն գոյութիւն չունէր այդ արիւնկեր թուրքի համար. իւր նման 10-20 հոգի ետևը գցած ձիով շրջում էր հայ գիւղերի սահմանները, յարձակուած, անգէն մարդկանց լեղապատառ անելով կողոպտում, վիրաւորում, սպանում: Այդ գաւառում կան և թուրք գիւղեր, որոնք մեծմասով պատկանում են բէկերի: Սրանց սրտովն էր Սէիդի արածը, խիստ ուրախանում էին հայերի կողոպտուելու վրայ. գիշերները ապաստան էին տալիս աւագակներին ու ոստիկանութեան դէմ ծածուկ պաշտպանելով խրախուսում: Հայը նրանց աչքում վախկոտ ոչխար էր. որովհետև հրացան պահել չէր սիրում, նրան հարկաւոր էր խու-

դել ու կթել: Հային տեսնելիս ծաղրելով ասում էին՝ քրիստոնէի գեալեբ, այսինքն անշնորք հայը գալիս է: Քրիստոնէայ գիւղերի մէջ սիրուն բացառութիւն կազմում էր ուտիարնակ Նիժը, ամեն բարիքներով լի աւանը:

Սէիդն իւր անահ, քաջասիրտ տեղով երկար ժամանակ չէր համարձակուում յարձակուել Նիժի վրայ. որովհետև լսել էր ու գիտէր, որ նրա ծառայատ տըների մէջ որսկան տղերք շատ կան, որոնք ձմեռը խմբերով Ղարայագ Քուան ափը վարաղի որս են գնում: Անկարող լինելով հարուստ Նիժի բարիքներով ակնյայտնի օգտուել, ծածուկ միջոցի գիմեց. կաշառելով իւր կողմը գցեց նիժեցի յայտնի Ալլահվերդուն, որին երկրագործ ժողովուրդը աղա էր կանչում: Մա ունէր իւր ձեռքի տակ մարդիկ. Սէիդի հետ ունեցած պայմանի համեմատ ամենայն գիշեր իբրև տանուգող Նիժից ապրանք էր զրկելու դուրս. ձի գոմէշ, թանգազին իրեղէններ և այլն: Ոչ ով անգամ հարևաններից չէր կարող կասկածել աղա Ալլահվերդու վրայ. ամեն կիւրակէ անխափան ժամ էր գնում և իբրև բարեպաշտ մարդ գողացուած ապրանքի համար հոգս անում, մի քանի օրէն վրայ գտնում. այսինքն հարիւր ու արժեցող ձիու կամ գոմէշի համար տիրոջից 40-50 ու միջնորդելու վարձ առնում, կէսն ինքը վերցնում, կէսը Սէիդին տալիս: Գիւղի քաջերը ամեն տեղ աչք բռնած չէին թողնում սահմանից ծիտ անցկենայ, բայց յանկարծ լսում էին, որ ներքի կամ վերևի թաղից ձի կամ լծկան գոմէշ է պակաս: Սյնտեղով անցել էին միմիայն Ալլահվերդու արբանեակները, ուրիշ ոչ ոք: Սակայն ինչպէս հաւատային թէ մոխրագոյն դրափէ վերաբիւ ու բանացնող, ուտերէն կտորատող աղա մարդը կարող է ժողովրդի տղրուկը լինել: Առաջին յանդուզն գիւղացին Խաչանն էր, որ առաջարկեց Ալլահվերդու փոշին քամու տալ, գիւլախորով անել, բայց հասարակութեան խոհեմե-

րը նրան լուեցրին, վախենալով թուրք պրիստաւի վրէժ-խնդրութիւնից, որ ամեն անգամ գիւղ գալիս Ալլահվերդու տանն էր իջևանում:

Որսկան Խաչանը ուտի աղգարնակութեան մէջ այն իգիթն էր, որի աներկիւղութեան մասին շրջակայ թուրքերն իրանք հրաշքներ էին պատմում ու խիստ պատկառում: Աւագակապետ Սէիդը շատ էր լսել այդ քաջի մասին և քանիցս նրա հետ ծանօթանալու համար կամեցել էր իւր մօտ կանչել տալ, բայց միշտ Ալլահվերդին խափանել էր:

* * *

Այս անալի օրերից մի իրիկու, երբ անձրևը բարակ շղում էր, օդը մութն էր ու ակնակիր, Սէիդը իւր խմբով անց էր կենում Ղարգխար կոչուած հին շէնատեղով. խիստ անտառոտ տեղ էր. ցերեկով էլ անդէն մարդը սիրտ չէր անում մտնել. հոշակաւոր գողադարան էր. կորած ապրանքներն կամ ոսկորներն էին այդտեղ գտնում կամ սրղերը: Աւագակններից մինը, որի պաշտօնն էր հոտառ շան դեր կատարել ու վերահաս վտանգի մասին տեղեկացնել, մօտեցաւ գլխաւորին ու ակնածութեամբ յայտնեց.

— Աղա Սէիդ, ծառուտի մէջ կապած մի ոչխար եմ գրտել, ի՞նչ կը հրամայես, որ անեմ:

Աւագակապետը յոգնած ու ամբողջ օրուայ շրջագայութիւնից քաղցած՝ ցանկութիւն յայտնեց որ ուզում է հանգստանալ. բռնուտ տեղը ձիուց իջաւ, հըրամայեց, որ իսկոյն կրակ անեն, գտնուած ոչխարը իբրև այդ օրուայ կամար—բաղդ, մորթեն ու նրա փափուկ տեղերից լաւ խորոված անեն: Ստորագրեալները շտապեցին հրամանը կատարելու: Փթուակ կոճղեր իրար մօտ դարսեցին, մի քանի ըսպէում դէի խարոյկ շինեցին: Սէիդը կրակին կուրծքը դէմ տուած

տաքանում էր ու մտքի մէջ փնթփնթում, միւսները խուրճիկները թամբի ետեից իջեցնելով, միջի պաշարն էին դադարեցնում ու նրանց սուփրի տեղ փոռում: Քիչ ժամանակից ետ ամենը առանց անձրևի շղալուն ու շղարձնելու նստեցին շուրջ բոլոր ու Սէիդի հետ ընթրիք արին: Հացը վերջացնելու վրայ էին, երբ հերթապահ աւազակը հեռու խաւարի մէջ աղմուկ բարձրացրեց.

—Քեզ ասում եմ, մի հակառակուիլ, թէ չէ Սէիդին հօ ճանաչում ես. լեզուդ ծոծրակովդ կը հանի:

Այս կերպ սաստելով աւազակը աշխատում էր մի մարդու բռնել, իսկ նա դաշոյնը ձեռին սպառնալով մօտ չէր թողում:

—Ինձ հանգիստ թող, այ մարդ, ասում էր անծանօթը, իմ ցաւը ինձ բաւական է, թող կորստիս հետքով գնամ, թէ չէ ես Սէիդ-մէիդ չեմ հարցնիլ, աղիքներդ այս ծառի տակին վէր կածեմ: Քեզ ասում եմ, ինձանից ձեռ քաշիր, թարթափս որ ընկնես, հաւի ճուտի պէս շնչահան կանես:

Պահապան աւազակը տեսնելով որ հակառակորդը իրանից լաւ թուրքերէն է խօսում, թուրքի տեղ ընդունեց ու քաղցրացաւ.

—Այ եղբայր, ես էլ մտածում եմ, թէ հայ մարդը մութ տեղ այսպէս քաջասիրտ չի խօսիլ: Դու դին-դարդս Ե ես եղիլ, ես անտեղեակ. արի գնանք մեծաւորի մօտ, ծանօթացիր:

Անտառի լուսեան մէջ հնչուող ամեն մի բառը պարզ լսելի էր հեռում. ուստի աւազակապետի հրամանով երեք հրացանաւոր մօտեցան վիճարանութեան տեղին ու սառն կերպով առաջարկեցին հակառակող մարդուն, որ գայ իրանց գլխաւոր Սէիդի մօտ, թէ չէ իսկոյն և եթ կրակում են:

—Կրակելու հերթը որ հասնի, կը տեսնենք այն

ժամանակ թէ փոշմանողը ո՞վ կըլինի, խօսեց անծանօթը, բայց որովհետև Սէիդի պէս իգիթին տեսնել ինքըս ուզում եմ, գնանք մօտը:

Ասեց ու թուրքերի հետ գէպի կրակի շղանգը գնաց: Տեղ հասնելով նստած աւազակապետին «բարի երեկոյ» մողթեց: Սէիդը քթի տակին կամաց պատասխանեց առանց առանձին ուշադրութիւն դարձնելու: Եկողի գէմքը վրդովուած էր, գոյն չէր մնացել վրէն:

Հրացանի մէջտեղից երկու ձիով բռնած խէթմեթալով նայեց իրան բերողներին, կարծես ուզում էր աչքերով նրանց արիւնը խմել: Սէիդը տեսնելով նրա հասարակ հագուստը, թինկ տուած տեղից ամենեկին շարժուեց. արհամարհական հայեացք գցելով հարցրեց.

—Ո՞րտեղացի ես և այս կէս գիշերին ինչի՞ ես ման գալիս այս անտառում:

—Կորուստ ունեցողը ման կըգայ, գիշեր լինի թէ ցերեկ: Իսկ եթէ ուզում ես իմանալ թէ ես որտեղացի եմ. իմացիր.—նիժեցի եմ, պատասխանեց նա:

Աւազակապետը այս համարձակ խօսուածքից ոչ միայն իւր մարմնի անփոյթ դիրքը ուղղեց, այլ և անհանգստութիւն զգաց, որ նիժեցու է պատահել: Ունքերը կիտելով, քիթ ու պոռնակ թթուացնելով աշխատեց սարսափ ազդել խօսակցի վրայ, բայց տեսնելով որ անծանօթն աչքը իրանից չի հեռացնում, ուղեց կողմնակի հարցերով իմանալ թէ ո՞վ է այդ սրտոտը:

—Ի՞նչ ես կորցրել, որ այս մութ գիշերին առանց փորձանքից վախենալու Չարգետի աւերակ շէնատեղն ես եկել:

Անծանօթը խոր շունչ քաշելով հանդարդ պատասխանեց.

—Քու հարցին կարճ պատասխանել չի կարելի. քեզ պէս իգիթի առաջ կանգնած է մի յոգնած բեզարած մարդ, եթէ ուզում ես ցաւս իմանալ, միջոց տուր

պատմեմ, թէ ի՞նչ է անցկացել այս երեկոյ իմ գլխով: Ես վրդովմունքից գազազել, ծառի ու թփի հետ կռիւ էի տալիս, երբ քու մարդիկն հեկան տակից գլխից խօսելով զայրոյթս աւելի բերին, կարծում էին թէ կինարմատի են պատահել անտառում:

Այս համարձակ ձևը աւելի վառեց գլխաւորի հետաքրքրութիւնը, առանց բարկութեան որ և է նշանցոյց տալու.

— Համեցէք նստիր, ասեց, հանգստացիր ու պատմիր, որ իմանամ թէ ի՞նչ մարդ ես և ի՞նչ ես տեսել:

Նիժեցին առանց քաշուելու նստեց փռած խուրջինի մի ծայրին հրացանը գոգն աննելով, գտակը ճակատից ետ քաշեց. ծխամորճը գրպանից հանեց. ծխախոտի տոպրակը գոտկի տակից քաշելով լցրեց ու մի պէժ կրակ գրեց. երկու երեք շունչ ծուխ կուլ տուեց: Թուրքերը նկատելով որ իրանց մեծաւորը հետաքրքրութեամբ լուռ սպասում է ականջ դնելու, իրանք էլ մի կողմ նստտեցին:

Անծանօթի երեսին այժմ ամենևին վրդովմունք չկար. ծխամորճը պտղունցում հուպ տուած, հանդարտ ձայնով պատմեց հետեւեալը.

— «Հարկաւորութիւն չկայ սկզբից ասելու, թէ ես ո՞վ եմ, բաւական է, որ իմանում էք թէ ես նիժեցի եմ. այժմ աւելացնում եմ որ որսկանութիւնը իմ սիրած բանն է»:

Այս խօսքի վրայ Սէիդի աչքերը պսպղացին. կարծես մտքում ասելիս լինէր, — չլինի առաջս նշանաւոր Սաչանն է նստած: Էլ չուզեց մտքինը աշխարհ անել. անծանօթը խօսքը շարունակեց. «գայլի շուաքում երբեմն աղուէսը ձգտում է անուն հանել, այս դուք գիտէք. մեր գիւղում էլ մի քանի գոգ կատուններ ունենք, որ Ալլահվէրդի բէկի շուաքում քաջութիւններ են աւում: Դրանցից մինը շաբաթ առաջ դարդակ բանի հա-

մար կռուել է եղբօրս հետ ու վերջում սպառնացել. «տես ինչ կըբերեմ գլուխդ». գա ինձ հետ միշտ եղել է բարեկամ. այնքան աչք է պահել, որ ես զիւղից հեռանամ. յետոյ եկել է ջուխտ գոմէջը պարտէզից հանել տարել: Տանը կիսարմատներն են եղել. եղբայրս գործի տեղից գալիս է, տեսնում ապրանք չկայ: Շատ էլ ման է գալիս, հարցնում, ոչ ոք չի կարողանում մի ուղիղ լուր պսել: Հաղար ու մի գոգ ու շուն է անցկենում գիւղի գլխով, ո՞վ գիտէ, ով է տարել: Վեց օր էր, ես որսատեղում, էրէների ետնից քարափներ շանգշանգելուց եղունգներս մաշուել էին. այսօր իրիկնադէմ յոգնած, ուժասպառ եղած երբ տուն եկայ ու գոմէշներին գողացուելը իմացայ. կարծես սրտիս մի գնդակ դիպաւ: Գոչեցի՝ «Գէօդ պատուի, Ավչի Սաչան. աշխարհը այնքան փչացաւ, քու ապրանքն էլ գողացան», էլ չընստեցի, որ կամ հանգստանամ կամ բան ուտեմ: Հրացանս առանց շնքիցս հանելու թողի տունը ու գիւղից գուրս գալով շտապեցի այս ծմակը, որ ինչպէս լինի գոմէշներս ողջ անձնաս աղատեմ»:

Սէիդն իմանալով ոչ աներկիւղ Սաչանն է խօսողը, երեսին աւելի լրջութիւն տուեց ու ստորագրեալներին պատուիրեց, որ ձիաներին նայեն ու լուռ մնան:

Սաչանը ծխամորճը մի անգամ էլ ծծելով խօսքը շարունակեց. «գէսը գալիս ճանապարհին մտածում էի. կարելի է, որմին չի տարել, ապրանքն ինքն է քաշուել, ես զուր տեղ ուրիշի մեղք վերցնում եմ: Բարկութիւնս համ գալիս էր, համ վէր նստում. բայց յոգնածութիւնս ամենևին չէր անցնում: Տխուր շրջում էի անտառածածկ գերեզմանտառում. յոգնութիւնից ստիպուած նստեցի մի տապանաքարի վրայ: Մութն էր, սաստիկ մութ: Մտքիս հետ ընկած միջոցին մի թրբխոցի ձայն լսեցի: Ուշադրութիւնս լարելով երբ երկրորդ թրբխոցը ականջս ընկաւ, նկատեցի որ հեռուից է: Իս-

կոյն տեղիցս վերկացայ. ասի՛ կարելի է բախրա կամ կխտար է, ինչո՞ւ ձեռից թողնեմ: Համ առաջ գնացի, համ ականջս սուր պահեցի.— ծառապատ մթնոլորդը լուռ ու հանդարտ էր, ինչպէս ոտիս տակի տապանաքարերը: Թրբխկոցը կէնդումէնդ կանոնաւոր գալիս էր, հեռու խաւարի ծոցից: Մտածում եմ.— Տէր Աստուած, վաղուց այստեղ բնակութիւն չկայ, մարդ ցերեկով սիրտ չի աւնում այս ծառերի տակով անցկենայ, այժմ գիշերով ի՛նչ պէտք է լինի: Թրբխկոցի ուղղութեամբ գնացի, այնքան գնացի, մինչև անտառի պտուկը հասայ: Կռացայ գետնին կպայ ու ականջ դրի. դարձեալ լսելի էր մթան մէջ պարբերաբար հնչուող թխկոցը, բայց խո՛ւ, անորո՛շ: Յոգնութիւնս մոռացած, քայլերս դէպի առաջ փոխեցի, բայց երբ կրկին ուշի-ուշով դիտեցի, թէ թրբխկոցը ո՞ր կողմից է, այդ վայրկենին ամբողջ մարմնովս մի դող անցաւ: Հեռում կանգուն քարերի մութ ստուերները ինձ ասում էին, որ առաջս թուրքի հանգստարան է: Կեանքումս զարհուրելի բաներ շատ էի տեսել, բայց կենդանացած մեռելի չէի պատահել: Խնդրում եմ, ասածս սրտներիդ չառնէք. ինչ որ ժողովրդից լսել եմ, այն եմ կրկնում: Շատ էի իմացել, որ թուրքի մեռելը սաղանում է. ասողների վրայ ծիծաղել էի ու երբէք չէի հաւատացել, բայց այժմ արդէն մեռելի շարժողութիւնը պարզ լսում էի... Հրացանը վզէս հանեցի, ազդօթին նորեցի:

— Ինչո՞ւ, ուղում էիր սաղացած մեռելին կրկին սպանե՞ս, սրտադող հարցրեց աւագակապետը:

— Ոչ, մտածում էի ինքս ինձ. կարելի է, գազան է, մթից օգուտ քաղելով մեռելի գիակը հանել քրքրում է: Քիչ էլ առաջ գնացի, կանգ առայ ու շունչս բռնած ականջ դրի. չլինի՞ թէ ուղղութիւնս փոխեմ, ուրիշ կողմի վրայ գնամ: Այդ բողբոջին գոմէշներին կորուստը բոլորովին մոռացել էի. հետաքրքրութիւնը սիրտս մտած

հէնց շարունակ առաջ էր մղում, որ իմանամ, ո՞վ է թխկացողը. սիրտս ասում էր, «կարելի է, նեղ անձար տեղն է, գնա վարձք արա, հոգի ազատիր»: Մի քանի քայլ փոխելուց ետը դարձեալ կանգնեցի, դարձեալ ականջ դրի: Հիմի պարզ լսում էի թրբխկոցը, դանդաղ իրար հանից իջնող հարուածներով: Երբեմն էլ երբ շունչս ներս քաշած լաւ ականջ էի դնում, թրբխկոցի հետ խառ լսում էի խոր անքոցի ձայն: Էլ մազաչափ կասկած չունէի, որ դա կենդանացած մեռելի ծանր շնչատութիւնն է:

Սիրտս ներսից կարծես բոթում էր թէ՛ մի կանգնիլ, մօտեցիր, օգնիր: Պինդ խաւար էր. ինչքան էլ աչքերս չուում էի, քիչ բան էի կարողանում որոշել շուրջս. ամենից պարզ երևում էին հրացանիս արծաթէ կապերը: Կրկին առաջ գնացի այնքան ո՞ր, գերեզմանը մնաց ինձնից երկու գրկաչափ հեռու: Ես կանգ առայ: Մտածում եմ. «Ինչպէս վարուեմ, եթէ գլուխս փորձանքից ազատելու համար ետ փախչեմ, վերջն ինչ պատասխան տամ Աստուծոն, որ խեղճ մարդին թողում եմ տանջուելիս ու հեռանում: Կարելի է, ինձ ծանօթ թուրք է, շնորհակալ կըլինի, եթէ օգնեմ: Չէ, փախչելը քաշութիւն չի», վճռեցի ինքս ինձ և մօտեցայ փոսին, որ տեղից որ անքոցը պարզ լսում էր:

Սաչանի այս խօսքերի վրայ Սէիդը օրօրուելու պէս շարժուեց, բարեպաշտ մուսուլմանի դէմք առած, բեղերն ու միրուքը անձայն շփեց. իսկ միւս աւագակները սարսուռի տակ դողում էին. հնար ունենային, կը փախչէին որ վերջը չըլսեն: Այդ նկատելով Սաչանը հարցրեց.

— Սէիդ աղա, խօսքս կտրե՞մ թէ շարունակեմ:

— Շարունակիր մինչև վերջը, աւչի Սաչան, պատասխանեց սրտողութիւն ստացած աւագակապետը:

— Լաւ, դէ լսէք. կանգնել եմ գերեզմանի ափին. նեղ ձեղքից տնքողի ձայնը այնքան մօտ է թւում,

կարծես շունչը երեսիս դիպչում է: Յանկարծ ներսը լսելի եղաւ խիստ ամուր չրըխկոց: Ինքս ինձ ասի. «ո՛վ գիտէ, խեղճ ննջեցեալը ինձ տեսնում է գերեզմանից, բայց չկարենալով բերանը բանալ, ճարահատած իւր նեղ վիճակը արտայայտում է տնջոցով ու դագաղի տախտակները կոտորատելով: Գու՞թս շարժուեց, հրացանս դրի մի կողմ, դաշոյնս հանեցի, ձախ ձեռով ամուր բռնեցի. «եա Տէր Աստուած» կանչելով կոացայ դէպի գերեզմանի ճեղքը: Մահն ու կեանքը առաջիս կուռում էին. մտածում էի «վայ թէ մեռելը ինձ ամուր բռնի, ներս քաշի»: Այդ միտքն էլ ինձնից հալածելով ասի «ինչ լինում է, թող լինի» ու կուռս մեկնեցի ներքև. մազ ընկաւ մատներիս արանքը: Համոզուած որ անշուշտ ննջեցեալի գլխի մազերն է, ամուր բռնեցի ու ինչքան ուժ ունէի ձգեցի և բռնածս մի կերպ փոսից դուրս հանեցի: Սակայն ի՞նչ էք կարծում, ի՞նչ էք որ հանեցի:

Սէիզը գունաթափուած էր. այդ հարցի դէմ ֆնաց պապանձուած:

— Դուք լուռ էք, ոչինչ չէք խօսում վախից, քիչ է ֆնում փախչէք. բայց ես մթան մէջ իմ հանած առարկան շոշափելով ոչ վախեցի, ոչ ետ փախայ, այլ զարմացայ:

— Ինչպէ՞ս թէ զարմացար, ողջ մարմնով դողալով հարցրեց աւազակապեար, դժողքի բերանը քո առաջ բաց և դու չը վախեցի՞ր: Փեղամբարի միրուքը վկայ, անկարելի բան ես ասում:

— Այո, չը վախեցի, հանգիստ պատասխանեց Խաչանը սարսափած Սէիզի երեսին նայելով, որովհետև իմ հանածը ոչ կենդան մարդ էր և ոչ մեռել, այլ, այլ մի մեծ...

— Մի մեծ ի՞նչ, անհամբերութեամբ հարցրին այս ու այն կողմից:

— Մի մեծ մազեղ ոչխար, շեշտեց Խաչանը:

— Վայ Աստուած քո մէջքը կոտրի, ոչխար, բացականչեցին աւազակները և ավշութիւնից ֆնացին մոմի պատուք դառած: Խաչանը խօսքն առաջ տարաւ.

— Էլ չեմ իմանում թէ ի՞նչքան անիծեցի այդ տխմար անասունի ծնունդը, որ արածելիս անզգոյշ է կարուել ու թիկունքի վրայ ընկել գերեզմանի մէջ: Երևի երեսի մի տախտակը փտած է եղել, ոտի տակին կոտրուել է: Վերկենալու հնար չի ունեցել, ամեն մի շարժուելիս ոտով զարկում էր միւս տախտակներին: Թէպէտ դրս պատճառով այնքան շարչարուել էի ու գիշերը դուր անցկացնելով մեծարժէք գոմէշներս աչքից գցել, սակայն էլի վաստակ էր, չուզեցի կորչի, խոկոյն հէտիս—սրնդիս փաթաթանը արձակեցի, մի ծայրով ոչխարի ոտը կապելով, միւսը ամրացրի մի թփի: Անտառի մի կողմը ֆնացել էր առանց աչք ածելու. ասի՛ գընամ այնտեղ էլ փնտռեմ. եթէ գոմէշները կը գտնեմ, աւելի լաւ. կը դամ ոչխարս էլ կը տանեմ տուն: Բայց յոյսերս դուր անցան. գոմէշներս չը գտայ ու չը գտայ: Հաւատալով որ այս իրիկուն բազդն ինձնից երես է թեքել, աւելորդ համարեցի հեռու մանգալը. ձախորդութեանս վրայ կատաղած ետ էի գառնում, որ կապած ոչխարը գոնէ տանեմ տուն, մինչև որ առաւօտը մի ճար գտնեմ գոմէշներիս համար. եկայ տեսայ այդ շարքաստ ոչխարն էլ արձակած տարած. Սրտնեղութեանս ու վրդովմունքիս չափ չկար. հէնց այդ ժամանակ առաջս կտրեց քո պահապանը: Այժմ զարմանում եմ թէ ի՞նչպէս համբերեց սիրտս, որ ոչխար տանողի ջիգըը նրանից չըհանեցի:

Այսքանն ասելով լսեց Խաչանը ու ձեռներով գոգում դրած հրացանը շոշափեց:

— Աղս Ասկեար, կանչեց Սէիզը ոչխար գտնող աւազակին, առաջ արի, ասա, իրիկուանս մազեղը ինչ՞ով էր կապած:

— Ոտի փաթաթանով, անդա, ուղիղ այնպէս, ինչպէս ավչի Խաչանն է պատմում:

— Բեր այստեղ, տեսնեմ:

Հէտիկն բերին տուին աւազակապետին, սա համեմատեց միւս հատի հետ, որ Խաչանի ստին էր:

—Աստծու հալալ քու ապրանքն է, ավչի Սաշան, գոչեց քաջ Մէիզը, իմ հրամանով են մորթել այդ ոչխարը: Քաշած նեղութիւնդ մեծ է, շատ մեծ. անա այս 50 մանէթը ոչխարի գինը: Ես Մէիզս, որ Ղաբալա, Շիրուան գաւառները ուռի պէս դողացնում եմ, քո տեղ լինէի, ոչ թէ չէի մօտենալ շնչաւորուած մեռելին, այլ եթէ գերեզմանի մօտով անցնելիս ներսից մի շփլթոց լսէի, վախից լեղիս կը պատուէր: Էվալլա, աֆարիմ, գոչեց Մէիզը ձեռը դէպի Սաշանը մեկնելով: Երբ դու այդքան քաջ ես, հալալ լինի քու կերածը: Անհող կաց, մազդ չի կորչել. էգուց գոմէշներդ կըգտնես քու պարտեզում: Ալլահվերդին կամ իւր մարդիկը շատ ծուռ են արել քեզ պէս իգիթի ապրանքին ձեռ տալով:

Իբրև խոր յարգանքի նշան աւագակապետը իւր ծխախոտի ամանը մեկնեց Սաշանին, որ ծխամորճը լցնի. աւագակներից մեկին էլ ակնարկ արեց, որ կրակի պէծ մօտեցնի:

—Ավչի Սաշան, Նիժու քաջերի մասին վաղուց էի լսել, բայց երբէք չէի կարծել, թէ հայիկամ խաչապաշտ ուղու մէջ այդքան աներկիւղ մարդ կըտեսնեմ, ինչպէս դու ես: Դու ճշմարիտ իգիթ ես. եթէ քեզ պէս մի քանիսն էլ լինէին Նիժում, այն ժամանակ դժուար չի մեր մոխրը քամուն տալ: Սօսք եմ տալիս ձեր գիւղի ծեղին չգիւղչել. այդպէս էլ ասա քու հասարակութեան: Բայց դու յոգնած ես, ոտով գիւղ գնալը քեզ նեղութիւն կը լինի, համեցէք իմ ձին նստիր. մարդկանցս մինը մինչև ձեր գիւղի ափը կըգայ ու ձին ետ կըբերի:

* * *

Այդ դէպքից ետ Մէիզի շուաքը այլևս չերևաց Նիժի շրջակայքում: Սաշանի խորհրդին հետևեցին անթիւ երիտասարդներ, զինուեցին իրանց կեղեքող թուրք բէկերի դէմ, սկսան կռուել փայտով, սրով, հրացանով: Յաղթութիւնը քնաց նիժեցոց կողմը: Բէկերի ընկճուելովը գաւառից չքացան աւագակների խմբերը: Իսկ փուչ Ալլահվերդին հեռացաւ վարդաշէն. նիժեցիք նրան հանգիստ չտուին. համախօսակամի ուժով իբրև քսասակար անդամի հեռացրին նրան դէպի Սիրիս:



